ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ԵՐԱՆՈՍՅԱՆԻ
(1904—1978)

Ապրիլի 25-ին վախճանվեց Վարդենիսի ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր տ. Հակոբ քահանա Երանոսյանը, որը շուրջ 21 տարի անշահախնդիր նվիրումով ծառայել է իր ժողովրդին և իր եկեղեցուն, սիրված և հարգված բոլորից, որպես ազնիվ ու բարի հովիվ:

Հանգուցյալը ծնվել է 1904 թվականին Վարդենիսում և մանկուց սիրել հոգևոր աստվածերգը, սաղմոս ու շարական և իր կյանքը նվիրել եկեղեցու սպասավորության գործին:

1957 թվականին քահանա է ձեռնադրվել տ. Սահակ արքեպիսկոպոսից Երևանի ս. Սարգիս եկեղեցում և ապա պաշտոնավարել իր հայրենական գյուղի եկեղեցում մինչև իր մահը:

Իր նվիրյալ աշխատանքի համար արժանացել է Վեհափառ Հայրապետի օրհնությանն ու գնահատությանը և ստացել քահանայական լանջախաչ կրելու իրավունք:

Ապրիլի 27-ին կատարվել է հանգուցյալ տ. Հակոբ քահանայի վերջին օծման և թաղման կարգը՝ ձեռամբ Երևանի ս. Սարգիս եկեղեցու տ. Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյանի և մասնակցությամբ տ. Կարապետ քահանա Գրիգորյանի: Տ. Ռուբեն ավ. քահանան իր դամբանական խոսքով վեր է հանում հանգուցյալի ծառայությունները իր եկեղեցուն և ժողովրդին:

Հանգիստ հանգուցյալ տ. Հակոբ քահանայի ոսկորներին: